ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 60

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

16-ը հունիսի 2022թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 31-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Նախքան նիստը սկսելը մասնակիցները 1 րոպե լռությամբ հոտնկայս հարգեցին ԵՊՀ նախկին ռեկտոր, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ լուսահոգի **Արամ Սիմոնյանի** հիշատակը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ 2022-2023 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կարգի հաստատում:

   /Զեկուցող ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան**/

2. ԵՊՀ ԻՄ ուսանողների պրակտիկայի կազմակերպման կանոնակարգի» (նոր խմբագրություն) հաստատում :

   /Զեկուցող՝ ՄԿՊԿ բաժնի վարիչ **Լ. Բեգինյան**/

3. ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ի 2021-2022 ուստարվա գործունեության մասին:

   /Զեկուցող ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ **Ա. Թիրաբյան**/

4. ԵՊՀ ԻՄ 2023-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում:

   /Զեկուցող ԵՊՀ ԻՄ տնօրեն **Ա. Մակարյան** /

5. Ընթացիկ հարցեր

   5.1. Փոփոխություն «ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգում (հաստատված ԵՊՀ

ԻՄ գիտական խորհրդի 10.06.2017 թ. թիվ 24 նիստում)

/Զեկուցող ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան**/

5.2. «ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող պահանջները» հաստատելու մասին։

/Զեկուցող ԳԽ ՈԿ մշտական հանձնաժողովի նախագահ **Ն. Գրիգորյան/**

5.3. «ԵՊՀ ԻՄ կառավարման գործընթացներում ուսանողների և դասախոսների մասնակցությունը երաշխավորող քաղաքականությունը» հաստատելու մասին։

/Զեկուցող ԳԽ ՈԿ մշտական հանձնաժողովի նախագահ **Ն. Գրիգորյան/**

Բաց քվեարկությամբ՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում

- Հաստատել նիստի օրակարգը։

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ 2022-2023 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կարգի հաստատում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյանի** հաղորդումը.

Ա. Դավթյանը նշեց, որ սույն կարգի վերանայման համար հիմք է հանդիսացել 2022թ. մայիսի 26-ի ԵՊՀ գիտական խորհրդի նիստով հաստատված «Երևանի պետական համալսարանի (առկա և հեռակա ուսուցման ձևերով) մագիստրատուրայի ընդունելության կարգ»-ը։

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ը մագիստրատուրայի ընդունելությունն իրականացնում է միայն հեռակա ուսուցմամբ մեկ՝ «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով։ Նա նշեց, որ մասնավորապես կատարվել են հետևյալ փոփոխությունները.

Ավելացվել են 3-րդ և 4-րդ կետերը .

3. *Մագիստրոսական կրթական ծրագիրն իրականացվում է, եթե առաջին կուրս ընդունված ուսանողների թիվը 10-ից պակաս չէ։*

4. *Մագիստրատուրայի ընդունելության համար պահանջվող ատեստավորման գնահատականի և դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին*

*որակական գնահատականի (այսուհետ՝ ՄՈԳ) նվազագույն շեմը յուրաքանչյուր տարի սահմանվում է **ԵՊՀ ԻՄ** տնօրենի հրամանով։*

6-րդ կետում մագիստրատուրայի ընդունելության ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկել է **ԵՊՀ ԻՄ-ի փոխտնօրենը, ԵՊՀ ԻՄ** տնօրենի հրամանով մանդատային հանձնաժողովը ձևավորվում է **ԵՊՀ ԻՄ փոխտնօրենի** նախագահությամբ։

Ավելացված 4-րդ կետի հետևանքով փոփոխություն է կատարվել 9-րդ կետի ենթակետերում և 10-րդ կետում։ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության կարգը ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 1-ում։

Արտահայտվեցին –ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մ.Միքայելյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լ. Հարությունյանը և այլոք։

Մասնավորապես նշվեց, որ կարևոր է ընդունվող ուսանողների նվազագույն քանակի հաշվարկը, որովհետև փոքր խմբերով դասընթաց կազմակերպելը ամեն դեպքում արդյունավետ չէ։

Բաց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 60/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության կարգը՝ համաձայն հավելված 1-ի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

Օրակարգի երկրորդ՝ « ԵՊՀ ԻՄ ուսանողների պրակտիկայի կազմակերպման կանոնակարգի» (նոր խմբագրություն) հաստատում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ՄԿՊԿ բաժնի վարիչ **Լ. Բեգինյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ վերանայման համար հիմք է հանդիսացել 2022թ. մայիսի 26-ի ԵՊՀ գիտական խորհրդի նիստով հաստատված «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման կանոնակարգ»-ը: Կարգը տեղայնացվել է և ավելացել են հետևյալ կետերը.

16-րդ կետում ավելացվել է 1-ին ենթակետը՝ *1) առաջարկություն տվյալ ուսումնական տարում նախատեսվող պրակտիկայի անցկացման վայրերի վերաբերյալ:*

21-րդ կետում կատարվել է հետևյալ ավելացումը.

Արգելվում է նույն ուսումնական տարում ընթացիկ ու վերահանձնվող ուսումնական պրակտիկաների միաժամանակյա անցկացումը: Պրակտիկայի վերահանձնումը կազմակերպվում է այն ուսումնական տարում, որում կրթական ծրագրով տվյալ ուսանողի համար այլ ուսումնական պրակտիկա նախատեսված չէ՝ բացառությամբ բակալավրիատի 3-րդ կուրսում ուսանողական իրավունքները վերականգնող կամ ԵՊՀ ԻՄ-ի տեղափոխվող ուսանողների, որոնց դեպքում մեկից ավելի պրակտիկաների միաժամանակյա վերահանձնումը կատարվում է հաստատված անհատական ժամանակացույցին համապատասխան:

Ամբողջությամբ ավելացվել են 24-30-րդ կետերը, որոնք վերաբերում են պրակտիկայի առցանց եղանակով անցկացմանը՝ կարգը ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 2-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, ԿԲԴՎ բաժնի վարիչ Ն. Գրիգորյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը և այլոք:

Արտահայտվողները կարևորեցին արվող փոփոխությունները և առաջարկեցին հաստատել համաձայն հավելված 2-ի:

Բաց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 60/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հաստատել «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողների պրակտիկայի կազմակերպման կանոնակարգը»՝ համաձայն հավելված 2-ի:

2 Ուժը կորցրած ճանաչել 2018 թ. մայիսի 26-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը»:

3 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Օրակարգի երրորդ՝ ‹‹ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ի 2021-2022 ուստարվա գործունեության մասին›› հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ **Ա. Թիրաբյանի** հաղորդումը:

Ա. Թիրաբյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ ՈՒսանողական գիտական ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է թվով 31 գիտական, կրթական, մշակութային ծրագրեր և միջոցառումներ, մասնավորապես՝ 9 դասընթաց-քննարկում հետևյալ թեմաներով՝ «Word, Excel, Power Point ծրագրերի ուսուցում», «Հետազոտական աշխատանք գրելու նորմերը», «C++-ի հիմունքներ», «Խոսակցական արտահայտություններ», «Վարվեցողության կանոններ», «Էթիկայի դասընթաց», «Ինքնազարգացում և առաջնորդություն» և այլն, 3 սեմինար-քննարկում, 1 կինոդիտում-քննարկում, 2 գիտաճանաչողական այց դեպի «Ինժեներական քաղաք» և Իջևանի պատմաերկրագիտական թանգարան, 1 էսսեների մրցույթ, 3 գրքի քննարկում, 3 բանախոսություն, 1 ինտելեկտուալ խաղ, 3 ուսուցողական-

ճանաչողական միջոցառում, 1 կոնսուլտացիա Էհմ, Դիսկրետ մաթեմատիկա և մաթեմատիկական անալիզ առարկաների քննությունների նախապատրաստման համար: ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ն սերտ համագործակցությունները շարունակել է Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոնի, Տավուշի մարզային գրադարանի և ԵՊՀ ԻՄ գրադարանի հետ: 2021-22 ուսումնական տարվա առաջին կիսամյակում մեկնարկել է բանավեճի ներբուհական առաջնությունը ,որի շրջանակներում մասնաճյուղի տարբեր ֆակուլտետներից ձևավորվել են 12 թիմեր՝ բաղկացած 4-ական անդամներից: Բանավեճն ընթացել է շուրջ 2 ամիս, որի ընթացքում մասնակիցներն անցել են մեկօրյա որակավորման դասընթաց, այնուհետև զարգացրել իրենց առաջնորդային և վերլուծական հմտությունները , ձեռք բերել արդիական գիտելիքներ տարբեր թեմաներից և իրենց խոսքը դարձրել ավելի ազդեցիկ ու կառուցվածքային: ԵՊՀ Արևելագիտության ամբիոնի հետ համագործակցությամբ իրականացվել է ադրբեջաներենի եռամսյա դասընթաց, որը վարել է վերոնշյալ ամբիոնի դասախոս Ամալյա Պետրոսյանը: Դասընթացին մասնակցել է շուրջ 20 ուսանող: 2-րդ կիսամյակում շուրջ մեկ ամիս իրականացվել է «Գիտական շաբաթ» ծրագիրը ,որի շրջանակներում կազմակերպվել են դասընթացներ հետևյալ թեմաներով՝ «Հոդված գրելու արվեստը», «Հետազոտական աշխատանք գրելու հմտությունները», «Դիպլոմային աշխատանք գրելու չափանիշները»: Բանախոսություններով հանդես են եկել ԵՊՀ ԻՄ դասախոսներ՝ բան. գիտ. թեկնածու, դոցենտ Վաչագան Ավագյանը, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Նաթելլա Գրիգորյանը, աշխ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Գուրգեն Հովհաննիսյանը: ԵՊՀ ԻՄ գրադարանի հետ սերտ համագործակցությամբ իրականացվել է «Բացահայտենք մեր գրադարանը» VOL2 խորագրով ծրագիրը, որի նպատակն էր ուսանողներին ծանոթացնել գրադարանում առկա գրականությանը, կատարել գրքերի վերադասավորում և այս մշակույթը տարածել ուսանողների շրջանակում: Ծրագրիը ընթացել է մեկ ամիս, որին մասնակցել են 17 ուսանող:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը և այլոք:

Արտահայտվողները կարևորեցին այն հանգամանքը, որ ՈՒԳԸ գործունեության վերաբերյալ հաջորդ հաշվետվության մեջ առանձակի շեշտվեն գիտական բնույթ ունեցող միջոցառումները, ընդ որում՝ ոչ միայն ՈՒԳԸ կողմից կազմակերպվողները, այլև առհասարակ այն բոլոր գիտաժողովները, որոնց ՈՒԳԸ աջակցությամբ մասնակցել են ԵՊՀ ԻՄ-ի ուսանողները:

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 60/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության 2021-2022 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

Օրակարգի չորրորդ՝ «ԵՊՀ ԻՄ 2023-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում » հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրեն Ա. Մակարյանի հաղորդումը: Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ ստորաբաժանումներից մասնագիտությունների հետ կապված նոր առաջարկներ չեն ներկայացվել և հետևաբար ներկայացրել ենք 2022թ.-ի մասնագիտությունների ցանկը (տես հավելված 3): Ա. Մակարյանը նշեց, որ անցյալ տարի ունեցել ենք 233 դիմորդ, իսկ այս տարի այս նույն մասնագիտություններով եղել է 263 դիմորդ առաջին հայտով, այնուհետև նշեց, թե յուրաքանչյուր մասնագիտությամբ քանի դիմորդ ենք ունեցել վերջին 2 տարիների համար:

Ա. Մակարյանը նշեց, որ առաջարկ է եղել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կառավարման մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագիր ունենալու վերաբերյալ, նախատեսվում է առաջնորդվել աշնանաը

հաստատվելիք ԵՊՀ համապատասխան կրթական ծրագրով, տարվում են ծրագրի մշակման աշխատանքներ։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մ. Միքայելյանը և այլոք։

Մասնավորապես Գ. Սիմոնյանը առաջարկեց հեռակա ուսուցման համակարգում ավելացնել «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտությունները, իսկ ԵՊՀ պրոռեկտոր Ռ.Բարխուդարյանը նշեց, որ հեռակա ուսուցման համակարգը հեռանկարային չէ, նոր ընդունված կրթության մասին օրենքում ներառված չէ և չարժե կենտրոնանալ հեռակա ուսուցման վրա։

Իսկ Ա.Մակարյանը, նշեց, որ գոյություն ունի համապատասխան ընթացակարգ և առաջարկեց ներկայացնել առաջարկ, համաձայն գործող ընթացակարգի, որը և կարող ենք քննարկել առաջիկա գիտական խորհրդի նիստում։

Ընթացիկ հարցեր։

5.1. Լսեցին «Փոփոխություն «ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգում (հաստատված ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 10.06.2017 թ. թիվ 24 նիստում)» հարցի վերաբերյալ ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյանի** հաղորդումը։

Բաց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 60/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է՝

1. «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական

գործընթացի կազմակերպման» կարգի (հաստատված ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտխորհրդի 10.06.2017թ. թիվ 24 նիստում) 4.6 կետում ներկայացված օրինակի վերջին նախադասությունում «Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում նվազագույն 8 միավորի շեմը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նախորդ անբավարար միավորը, տվյալ օրինակի դեպքում՝ 7» նախադասությունը փոխարինել «Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում դրական նվազագույն 8 միավորի շեմը, բայց բարձրացնում է գնահատականը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նոր միավորը» նախադասությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5.2 Լսեցին «ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող պահանջները›› հաստատելու մասին›› հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ ԳԽ ՈԿ մշտական հանձնաժողովի նախագահ Ն. Գրիգորյանի հաղորդումը:

Ն. Գրիգորյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ 2022-2026թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 1-ին նպատակի 1.4.8 «Ներդնել դասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական համակազմերի աշխատանքի արդյունավետության գնահատման նոր համակարգ» խնդրի իրականացման հանձնառությունից ելնելով՝ Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժինը մշակել է պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող պահանջներ:

Ն.Գրիգորյանը նշեց, որ պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող պահանջների ձևակերպումը և հստակեցնումը շատ անհրաժեշտ է նաև կրթական ծրագրերը արդյունավետ իրականացնելու տեսանկյունից, առավել ևս, որ դա նաև ծրագրային և ինստիտուցիոնալ հավատարմագրման կարևորագույն չափորոշիչներից է:

Զեկուցողը հիշեցրեց, որ բուհը ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման 5-րդ չափանիշի՝ Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, բ չափորոշչի՝ յուրաքանչյուր կրթական ծրագրի համար պետք է ունենա պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Արտահայտվեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, արհբյուրոյի նախագահ Ա. Մարգարյանը, Մ. Միքայելյանը, Գ. Սիմոնյանը, Գ. Հովհաննիսյանը և այլոք։

Մասնավորապես Գ. Հովհաննիսյանը առաջարկեց «Հաղորդակցման» բաժնում ավելացնել «ունակ կլինի գրական հայերենով հաղորդակցվելու» և նույն բաժնի «պահպանելու բարձրագույն կրթության ոլորտի իրավական նորմերը» արտահայտությունը վերաձևակերպել հետևյալ կերպ. «պահպանելու բարձրագույն կրթության ոլորտի իրավական նորմերի պահանջները»։ Այնուհետև առաջարկվեց հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող պահանջները՝ առաջարկվող փոփոխություններով, համաձայն հավելվածի 4։

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 60/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի 4։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

5.3 Լսեցին «««ԵՊՀ ԻՄ կառավարման գործընթացներում ուսանողների և դասախոսների մասնակցությունը երաշխավորող քաղաքականությունը» հաստատելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ ԳԽ ՈԿ մշտական հանձնաժողովի նախագահ Ն. Գրիգորյանի հաղորդումը։

Զեկուցող Ն. Գրիգորյանը նշեց, որ ներկայացված նախագիծը նախապես ուղարկվել է Որակի կառավարման մշտական հանձնաժողովի անդամներին, որոնցից

մի քանիսը ներկայացրել են իրենց առաջարկները՝ մասնավորապես Մ. Ճաղարյանը, Ա. Մարգարյանը, Լ. Բեգինյանը և Լ. Թումանյանը:

Այնուհետև զեկուցողը ներկայացրեց քաղաքականության նպատակը՝ այն է երաշխավորել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողների և դասախոսների մասնակցությունը Մասնաճյուղի կառավարման գործընթացներում, հնարավորություն տալ նրանց մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը, մեծացնել ուսանողների և դասախոսների բավարարվածությունը կառավարման գործընթացներին իրենց մասնակցությունից:

Ն. Գրիգորյանը մանրամասն ներկայացրեց քաղաքականության խնդիրները, Մասնաճյուղի սպասելիքները քաղաքականության իրականացումից, այն կառույցները, որոնցում պետք է նախատեսվի ներքին շահակիցների մասնակցությունը, կառավարման գործընթացներին ուսանողների և դասախոսների մասնակցությունը երաշխավորող կարգերին և ընթացակարգերին ներկայացվող պահանջները, ԵՊՀ ԻՄ-ի կառավարման գործընթացներում ուսանողների իրավասությունների ապահովումը, ԵՊՀ ԻՄ-ի կառավարման գործընթացներում պրոֆեսորադասախոսական անձնակազմի իրավասությունների ապահովումը, կառավարման գործընթացներին ուսանողների և դասախոսների ծանոթացման և նախապատրաստման համակարգը, կառավարման գործընթացներին իրենց մասնակցությունից ուսանողների և դասախոսների բավարարվածության ուսումնասիրությունը, կառավարման գործընթացներին ուսանողների և դասախոսների մասնակցության մեխանիզմների բարելավումը: «ԵՊՀ ԻՄ կառավարման գործընթացներում ուսանողների և դասախոսների մասնակցությունը երաշխավորող քաղաքականությունը» կարող եք տեսնել հավելված 5-ում:

Արտահայտվեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը և այլոք:

Բաց քվեարկությամբ՝ 15 կողմ, 13 դեմ, 1 ձեռնպահ, *որոշեցին*

ՈՐՈՇՈՒՄ 60/6

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կառավարման գործընթացներում ուսանողների և դասախոսների մասնակցությունը երաշխավորող քաղաքականությունը՝ համաձայն հավելվածի 5-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ